ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

— ————------ 2024 թվականի №—Ա

«ՊՐՈԴԻԶԱՅՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՊՐՈԴԻԶԱՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2024 թվականի մայիսի 8-ի գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացրել Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու երկու հայտ (այսուհետ՝ Հայտեր), որոնց համաձայն՝ Հայտերին կից ներկայացված 2019 թվականի նոյեմբերի 1-ին կնքված պայմանագրով Ընկերության միակ մասնակից Սուսաննա Սինանյանը իրեն պատկանող՝ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնեմասը նվիրատվությամբ հանձնել է Անահիտ Մանուկյանին, իսկ 2024 թվականի ապրիլի 11-ին կնքված պայմանագրով Ընկերության միակ մասնակից Անահիտ Մանուկյանը իրեն պատկանող՝ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնեմասը նվիրատվությամբ հանձնել է Էլիզաբետ Սինանյանին: Ընկերությունը միաժամանակ հայտնել է, որ հիշյալ գործարքները կնքվել են առանց Հանձնաժողովի նախնական համաձայնության համապատասխան կարգավորումների չիմացության պատճառով՝ հայցելով Հանձնաժողովի ներողամտությունը,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն (այսուհետ՝ Նախարարություն) ուղղված Հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 14-ի №ԿՍ/34.2-Մ2-8/2072-2024 գրությանն ի

պատասխան՝ Նախարարությունը նույն թվականի հունիսի 6-ի №01/11.1/5003-2024 գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված Հայտերի վերաբերյալ առարկություններ չունի՝ գրությանը կից ներկայացնելով նաև Ընկերության Հայտերի առնչությամբ՝ ազգային անվտանգության կամ պետական շահի տեսանկյունից առաջարկություններ և դիտողություններ չունենալու մասին Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դիրքորոշումը,

գ) Հայտերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործարքների համաձայնեցման մերժման հիմքերը: Պարզվել է նաև, որ Սուսաննա Սինանյանին պատկանող 100 տոկոս բաժնեմասը՝ Անահիտ Մանուկյանին, իսկ հետագայում Անահիտ Մանուկյանին պատկանող 100 տոկոս բաժնեմասը՝ Էլիզաբետ Սինանյանին նվիրատվությամբ հանձնելու գործարքները Ընկերության կողմից արդեն իսկ կնքվել են Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ՝ համապատասխանաբար 2019 թվականի նոյեմբերի 1-ին և 2024 թվականի ապրիլի 11-ին՝ առանց Հանձնաժողովի նախնական համաձայնության, ինչով պայմանավորված՝ օրենքի ուժով դրանք առ ոչինչ (անվավեր) են:

դ) մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման ընդունումը Ընկերությունը վերացրել է նշված խախտումները՝ 2024 թվականի մայիսի 8-ի գրությամբ Հանձնաժողով ներկայացնելով համապատասխան Հայտերը և բաժնեմասի նվիրատվության վերաբերյալ պայմանագրերը, և խախտման հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, այն ուղղակիորեն չի հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, առկա չէ խախտման կատարման կրկնակիություն և Ընկերությունը նախկինում նման խախտում թույլ չի տվել, և

հիմք ընդունելով Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ՝

1) Ընկերության մասնակից Սուսաննա Սինանյանին պատկանող՝ Ընկերության 100 տոկոս բաժնեմասը Անահիտ Մանուկյանին նվիրատվությամբ հանձնելու գործարքի կնքմանը,
2) Ընկերության մասնակից Անահիտ Մանուկյանին պատկանող՝ Ընկերության 100 տոկոս բաժնեմասը Էլիզաբետ Սինանյանին նվիրատվությամբ հանձնելու գործարքի կնքմանը:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ Հայտերում նշված՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ին և 2024 թվականի ապրիլի 11-ին կնքված Ընկերության բաժնեմասերի օտարման վերաբերյալ գործարքները կնքման պահից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում առ ոչինչ (անվավեր) են:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
---------- 2024թ.